ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2022 թվականի N 33

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՛՛Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին՛՛ ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ թիվ 698-Ն որոշմամբ, ՛՛Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին՛՛ ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ ՀՕ 60 և 64 հոդվածներով, հիմք ընդունելով Արթուր Պապիկյանի դիմումը, հողամասի և շինությունների հաստատված հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991թ. թիվ 4 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 23.02.2022թ թիվ 859 վկայագիրը և 23.02.2022 թ-ի թիվ 860 վկայագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնքի 06-043-0002-0021 կադաստրային ծածկագրով 0,1119հա մակերեսով հատկացված և որպես առանձին միավոր սահմանազատված հողամասի նկատմամբ օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Արթուր Պապիկյանի /ծնված 30.09.1962թ/ սեփականության իրավունքը:
2. Ճանաչել 0.1119հա հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող կառուցված բոլոր շենք շինությունների նկատմամբ Արթուր Պապիկյանի /ծնված 30.09.1962թ./ սեփականության իրավունքը:
3. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**